ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

31 մայիսի 2019 թ.
№ 8 (1042)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 54-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՄԱՅԻՍԻ 28-Ը ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

1918 թվականի մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը հայտարարեց անկախ Հայաստանի Հանրապետության ստեղծման մասին: Առաջին կառավարության նախագահ նշանակվեց Հովհաննես Քաջազնունին:

Հանրապետության օրը պաշտոնապես նշվում է 1992 թվականից: Այն հայոց պետականության վերածննդի խորհրդանիշն է:

Ինչպես նշում է պատմաբան Արմեն Ասրյանը. «Սարդարապատի հերսամարտը հայ ժողովրդին տվեց կյանք և անկախ պետականություն: Մեր պետականության, մեր կյանքի և արժանապատվության համար պարտական ենք Սարդարապատին ու նրա հերոսներին: 101 տարի առաջ այս օրը հայ ժողովրդի նվիրյալ զավակները հակագրոհի անցան հայոց ոչնչացմանն ու Հայաստանի վերջնական նվաճմանը ձգտող թուրքական զորքերի դեմ և արյունահեղ կռիվների ընթացքում ջախջախիչ պարտության մատնեցին նրանց»:

Սարդարապատում հաղթելով թուրքական բանակին՝ հայկական զորքերին հաջողվեց կասեցնել թուրքական ներխուժումն Անդրկովկաս և փրկել Հայաստանը ոչնչացումից: Սակայն Հայաստանի Հանրապետությունն ընդամենը երկու տարվա կյանք ունեցավ՝ 1918 թվականի մայիսի 28-ից մինչև 1920 թվականի դեկտեմբերի 2-ը, որովհետև 11-րդ Կարմիր բանակի զորամասերը մուտք գործեցին Երևան և հանրապետությունը խորհրդայնացվեց:

1996 թվականի փետրվարի 21-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից մայիսի 28-ը հռչակվեց որպես Առաջին Հանրապետության տոն:

Պետականության վերականգնումը ահռելի նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար. հենց Առաջին Հանրապետության ստեղծումով հայկական պետական մտածողության, հայապահպանության և ազգի ամրապնդման սկիզբը դրվեց: Խորհրդանշական այդ օրը փոխեց մեր՝ հնագույն ազգի ճակատագիրը՝ հնարավորություն ընձեռելով ապրել ու արարել սեփական երկրում, սեփական հողի վրա, կերտել իր պետությունը և պայքարել նրա զարգացման ու բարգավաճման համար:

Հայտնի են Ռուբեն Սևակի անվան մրցանակակիրները

Հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սուրեն Դանիելյանը համալսարանի գիտական խորհրդի նիստում ներկայացրեց արդեն 3-րդ տարին անցկացվող մրցույթի արդյունքները՝ նկատելով, որ այս տարի Ռուբեն Սևակի կենսագրական, հասարակական գործունեության և գրական բարձր շերտերը քննող խոհագրությունների մրցույթին ստացվել է գրավոր 18 աշխատանք՝ բուհի 7 ֆակուլտետից և 1 աշխատանք՝ ՀՊՄՀ հենակետային վարժարանից:

«Այս մրցույթում մեր առաջին հաջողությունը պետք է համարել երիտասարդության համընդհանուր սիրո, խանդաղատանքի՝ նման ներկայացուցչական բնաբուխ վերաբերմունքը Սևակ երևույթի, բանաստեղծական մնայուն արժեքների նկատմամբ»,-նշեց պրոֆեսոր Դանիելյանն ու հավելեց, որ աշխատանքներից առանձնացվել է հատկապես սուր մրցակցային բնույթը, նյութին մոտենալու և այն բացահայտելու ուսանողական բազմակողմ հետաքրքրասիրությունը:

Ըստ չափանիշների՝ 1-ին մրցանակ չի տրամադրվել և դրա փոխարեն մրցանակ է շնորհվել 2-րդ մրցանակային տեղերը զբաղեցրած 2 ուսանողի՝ Բանասիրական ֆակուլտետի ուսանողներ Ժաննա Նիկողոսյանին և Լիլիթ Դանիելյանին, 3-րդը՝ նույն ֆակուլտետի հեռակա բաժնի ուսանողուհի Հասմիկ Հակոբյանին, իսկ խրախուսական մրցանակը հանձնվեց Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողուհի Լուսինե Աբրահամյանին:

ՄԵՐ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԸ.

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԴԱՍ

Չկա ավելի բարձր արժեք, քան այսօրվա խաղաղ օրը մեզ պարգևած հայ քաջորդիների հիշատակի հանդեպ խոնարհումը, քան որդեկորույս մայրերի մեծարումը: Դա մեռնողներին պետք չէ, դա ապրողներին է պետք՝ սթափ պահելու հիշողությունը և հասկանալու, որ Հայրենիքը սոսկ տարածք չէ, այլ սրբություն, որի յուրաքանչյուր թիզ հողը արյան գնով է պահվել…

Հայ հերոսամարտերի հերոսներին և հայոց պատմությունն իմանալը, միմյանց փոխանցելը յուրաքանչյուր սերնդի պարտքն է նույն այդ նահատակների հիշատակին…

➤3

ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄՐՑԱՆԱԿԱԿԻՐՆԵՐԸ

Երևանի Թեքեյան կենտրոնում անցկացվեց մշակույթի տարբեր ոլորտներ ներկայացնող ամենամյա մրցանակաբաշխությունը: Այս տարի մրցույթին մասնակցել է 46 արվեստագետ: Չորս անվանակարգերում հանձնախմբերի ղեկավարները ջանացել են ընտրել բացառիկ ստեղծագործությունները՝ նաև կանգնելով դժվարին ընտրության առաջ:

Թեքեյան մշակութային կենտրոնի նախագահ Ռուբեն Միրզախանյանն իր ելույթում նշեց, որ ավելի քան երկու տասնամյակ այդ մրցանակաբաշխությունն անց է կացվում մշակույթի ասպարեզի լավագույններին խրախուսելու նպատակով:

Ելույթ ունեցավ գրական հանձնախմբի նախագահ, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, ԱՄՆ-ի և Կանադայի Թեքեյան միության վարչության նախագահ Երվանդ Ազատյանը: Նա ասաց, որ մրցանակաբաշխության սկիզբը դրվել է 1991 թվականին, երբ Հայաստանի արվեստագետները հայտնվել էին անելանելի իրավիճակների մեջ:

Գրականության ասպարեզում ներկայացված 16 գործերից չորսն են մնացել մրցակցության մեջ, բոլորն էլ բացառիկ էին, ի վերջո ընտրվել է մեկը՝ Արծվի Բախչինյանի «Հայաստանցի Մուչիկը» վեպը:

«Մեր գրականության հիմնագիծը այլուրությունն է: Ա. Բախչինյանի հերոսը ևս երկրից երկիր է գնում, մշակույթների բախման հերոսը աստանդական հայն է, տվյալ դեպքում՝ հայաստանցի Մուչիկը»,-ասում է Ե. Ազատյանը՝ շարունակելով, որ արագ շնչով կարդացվող վեպը բարդ հոգեբանական արմատներ ունի և աչքի է ընկնում գեղարվեստական բարձր մակարդակով:

«Բոլորս մասամբ Մուչիկ ենք, և մեր շրջապատում շատ են այդպիսիք: Մաղթենք, որ սփյուռքահայ մուչիկները, կամ գոնե նրանց երեխաները վերադառնան և շենացնեն իրենց հայրենիքը»,-ասաց մրցանակը ստացող գրողի կինը:

Թատրոն անվանակարգի հաղթող թատերագետ Բախտիար Հովակիմյանին ներկայացրեց հանձնախմբի ղեկավար Արմեն Էլբակյանը: Բ. Հովակիմյանին մրցանակ շնորհվեց «Թատրոնը նոր Ջուղայում» գիտական աշխատանքի համար:

«Մեր մշակույթի գործիչները կարիք ունեն գնահատվելու և արժևորվելու, որովհետև մշակույթի արժեքները դաստիարակելու են մեզնից հետո եկողներին, սա է մեր նպատակը,-ասաց Ա. Էլբակյանը:- Բ. Հովակիմյանը այն երախտավորներից է, որոնց կարելի է համարել մեր քայլող պատմությունը: Նա իր գործը կատարել է մեծ նվիրումով՝ հանուն թատրոնի և մեր վաղվա օրվա»:

Արդեն 94 տարեկան թատերագետը շնորհակալություն հայտնեց իր տարիների աշխատանքը մրցանակի արժանացնելու և գնահատելու համար: Որպես երկար տարիներ թատրոնի պատմությամբ զբաղվող մարդ՝ նա իր մի քանի նկատառումներն ու մտահոգությունները կիսեց ներկաների հետ՝ ցավով նկատելով, որ թատերագիտությունը մահացել է, անգամ չկա թատերագիտական որևէ պարբերական, իսկ լրագրողները աղավաղում են թատրոնի պատմությունը:

Թատերագետին մնացել է գրել Թեհրանի պատմությունը, հենց այդ նպատակին էլ կծառայեցնի մրցանակային գումարը:

Կերպարվեստի հանձնախմբի ղեկավար, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Կարեն Աղամյանն ասաց, որ երկու տասնյակից ավելի ստեղծագործություններից ընտրվել է Արա Հակոբյանի «Արևածաղիկներ» ստեղծագործությունը:

«Թեքեյանի անունը կրող մրցանակն ստանալն ինձ համար շատ ոգևորիչ է: Սիրում եմ կյանքը, լույսը, ջերմությունը, ստեղծագործությանս մեջ արտահայտել եմ այն ամենը, ինչ ուզում եմ՝ արևը, իսկ արևածաղիկը նման է արևին»,-ասաց արվեստագիտության դոկտոր, ՀՊՄՀ Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Ա.Հակոբյանը:

Երաժշտություն անվանակարգում մրցանակը շնորհվեց Սոֆյա Ազնավուրյանին՝ «Հայաստան» միհի օպերայի ստեղծման համար:

Սոֆյա Ազնավուրյանն իր օպերայում ներկայացրել է 20-րդ դարասկզբի Հայաստանը՝ Օսիպ Մանդելշտամի և նրա կնոջ աչքերով:

Մրցանակակրին ներկայացնող «Ազգ» թերթի խմբագիր Հակոբ Ավետիքյանն ասաց. «Խոսքի երաժշտությունը և երաժշտության խոսքը այստեղ իրար են գտնում և ստացվում է մի հրաշալի ստեղծագործություն»:

Մրցանակաբաշխությունն ուղեկցվում էր դասական հայտնի ստեղծագործությունների կատարումներով, որը մշակութային իրադարձությանը նոր երանգ և իմաստ էր հաղորդում:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Ներառական կրթությանը նվիրված աշխատաժողով

Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում մայիսի 14-ին կազմակերպվել էր «Դպրոցներում և մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում ներառական կրթության որակի գնահատման, առկա խնդիրների վերհանման հետազոտություն» թեմայով գիտահետազոտական աշխատանքի ներկայացում: «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի նախաձեռնությամբ, «Ներառական և համապատասխան որակյալ կրթություն բոլորի համար» ծրագրի շրջանակներում, այդ համատեքստում իրականացվել են հետազոտական աշխատանքներ ՀՀ Լոռու, Սյունիքի և Տավուշի մարզերում՝ վերհանելու ներառական կրթության որակի, համապատասխան մանկավարժական պայմանների ուսումնասիրության և տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոնների գործունեության մարտահրավերները:

2018-2019 թվականների ընթացքում ուսումնասիրություններ են արվել վերոհիշյալ երեք թիրախային մարզերի 114 դպրոցներում և 11 տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում, 12 քաղաքային և 71 գյուղական համայնքներում: Հետազոտությունն իրականացրել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի «Համայնքային ներառականության և հաշմանդամության հիմնախնդիրների հետազոտական կենտրոնը»:

Քննարկվող թեմայի մասին խոսեց ՀՀ ԿԳ փոխնախարար Լուսինե Առաքելյանը. «Մարդկային հնարավորություններն անսահմանափակ են, անկախ նրանց փոքրիկ թերություններից: Մենք փորձում ենք այդ թերությունները կանխատեսել և կանխել: 2014 թվականից հանրապետությունում մեկնարկած ներառական կրթության ուղղությամբ մեր որդեգրած քաղաքականությունն է՝ առերեսվել սեփական բացթողումներին: Ճանապարհը բարդ է, խոչընդոտներով լի, և այն հաղթահարելու ենք միմյանց հետ համագործակցելով»:

Փոխնախարարը շնորհակալություն հայտնեց Մանկավարժական համալսարանի գործընկերներին, կարևորեց նրանց կողմից կատարված հետազոտական աշխատանքի արդյունքում ստեղծված տվյալների բազան, որը կօգնի մինչև 2025 թվականը շտկել բոլոր բացթողումները: Լ. Առաքելյանն ընդգծեց, որ գործընկերային հարաբերությունների հիմքում պետք է լինի երեխայի շահը:

Փոխնախարարն ասաց, որ այս տարի ներառական համընդհանուր անցում է կատարվել Երևանում, որ ստեղծվել են միջգերատեսչական աշխատանքային խմբեր և քննարկումների ընթացքում քայլ առ քայլ առաջ են գնում՝ փորձելով ոչ միայն վերհանել խնդիրներն ու բացթողումները, այլև հաղթահարել դրանք:

«Մի կողմ թողնելով անցյալի ժառանգությունը՝ գործընկերային առաջ ենք գնում և կարծում ենք, որ ինքնաքննադատական քաղաքականությունը մեզ անընդհատ աչալուրջ կպահի»,-ամփոփեց Լ. Առաքելյանը:

Մանկավարժական համալսարանի պրոռեկտոր Արա Երեմյանը նկատեց՝ այսօրվա աշխատաժողովին մասնակցելու են եկել բացառապես շահագրգիռ անձինք, ասել է թե բոլոր հնարավոր շահագրգիռ ուժերը ներգրավված են այս աշխատաժողովի աշխատանքին: Նա վստահեցրեց, որ բուհը պատրաստ է ամեն ինչ անել քննարկման ենթակա հիմնահարցերի լուծման ուղղությամբ, համագործակցելով բոլորի հետ:

Գայանե Նորիկյանը խոսեց «Հայկական Կարիտաս» բարեսիրական ՀԿ-ի ներգրավվածության մասին հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման և այլ հարցերում, ապա ներկայացրեց «Համընդհանուր ներառականության գործընթացի կայացման գնահատումը ՀՀ երեք մարզերում» հետազոտական թիմին՝ Մարիաննա Հարությունյան, ծրագրի ղեկավար, Գոհար Հովյան, Լիլիթ Սարատիկյան, Թերեզա Ազատյան, Սուսաննա Մուրադյան, Քրիստինե Տանաջյան: Այնուհետև Մարիաննա Հարությունյանը ներկայացրեց ՀՊՄՀ կենտրոնի հիմնական նպատակը՝ իրականացնել հետազոտություններ հանրապետության ներառական կրթության ոլորտում: Զեկուցողը վերլուծական փաստերով ու թվերով ներկայացրեց կատարված աշխատանքը և ներկաներին ակտիվ քննարկումների ու հարցադրումների բարձրաձայնման հնարավորություն ընձեռեց:

Հետազոտության հիմնական արժեքն այն է, որ հիմնված է մասնակցային գնահատման մեթոդաբանության վրա. ընտրանքը ծրագրի անմիջական շահառուների կողմից ներառում է համընդհանուր ներառական կրթության իրավիճակի ներկայացում և խնդիրների վերհանում, որոնք վերլուծվել են ՀՀ պետական, միջազգային և հասարակական տարբեր կառույցների դիրքորոշումների և իրավական հիմքերի համատեքստում:

Աշխատաժողովն ամփոփվեց հարցուպատասխանով:

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԴԱՍ

➢1 Կուլտուրայի ֆակուլտետի 1-ին կուրսի տարբեր մասնագիտությունների ուսանողների կազմակերպած ցերեկույթ-միջոցառումն այսպիսի նպատակ էր հետապնդում: Պատմության դասընթացի շրջանակում ներկայացված դասի նախաձեռնողը պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարիամ Եղյանն էր, ուսանողների-խորհրդատուն ու ոգեշնչողը: Այն յուրօրինակ հիշողության դաս էր՝ նվիրված հայ հերոսամարտիկներին՝ հայդուկներից մինչև Արցախի նորօրյա հերոսներ: Երգ, պար, ասմունք. հուզվում էին ուսանողները՝ նաև հուզելով դահլիճում ներկա գտնվողների՝ ազատամարտամարտիկների, որդեկորույս մայրերի, սպաների, դասախոսների և ուսանողների սրտերը: Որքա՜ն դժվար է եղել հայ ժողովրդի մաքառումների ու պայքարի ճանապարհը և որքա՜ն թանկ գին է վճարվել հաղթանակների համար... Հայ ժողովուրդը համբերությամբ կրել է իր խաչը և հավատացել իր գալիք օրվան: Հուզմունքը խեղդում էր, միանալով հպարտության բերկրանքին՝ ալեկոծում դահլիճը. «Իսկ մեր սրտերը միակ սուրբ տեղն են զոհերի համար...Նոր սերունդը խոնարհվում է նրանց առաջ, ովքեր բռնեցին անմահության ու փառքի ճանապարհը...»:

Ուսանողներն այնքան խնամքով ու սիրով էին նախապատրաստվել այս դասին, «ազատամարտիկ» Սոսն էլ կարծես բեմի վրա սխրանքի էր մղում կուրսընկերներին...

Ահա շեփորի խորհրդանշական ելևէջներն ամփոփեցին օրվա ասելիքը, բայց ոչ ավարտը...Սա մի դաս է, որ ունի սկիզբ ու շարունակություն...

Որդեկորույս մայր Մարգարիտա Խաչատրյանը, հուզմունքը հազիվ խեղդելով, շնորհակալություն հայտնեց ուսանողներին: Բազմաթիվ միջոցառումների է մասնակցել, բայց այս մեկը յուրահատուկ էր: Արցախյան հերոսամարտում նույն այս ամսին նա կորցրել է մինուճար որդուն և չգիտի՝ մայիսն իր համար հաղթանակների՞, թե՞ սգո ամիս է: Այս իրարամերժ զգացողություններով էլ նա դիմեց դահլիճում ներկա գտնվող սպաներին, Արցախի հերոսամարտի մասնակիցներին, որդեկորույս մայրերին և ուսանողներին. «Մենք երբեք բացակա չենք դնում մեր զավակներին»:

Փոխգնդապետ Արդա Սերոբյանը, ով կամավոր մեկնել է Արցախ, սկզբից մինչև վերջ մասնակցել մարտերին որպես բուժքույր, հուզված վերապրում է պատերազմի տարիները, բոլոր այն պահերը, երբ մարտի դաշտում նահատակվում էին տղաները. «Նայելով այս կադրերը և լսելով ձեր սրտահույզ ասմունքը՝ ես մտովի հետ գնացի դեպի կռվի դաշտ... Չեմ կարողանում մոռանալ նրանց՝ ինձնից օգնություն հայցող հայացքները...»:

Փոխգնդապետը պատմեց, թե ինչպես Շուշիի ազատագրման օրը ստեփանակերտցիները ծաղիկներ էին փռում իրենց՝ հաղթողների ոտքերի տակ, որովհետև Շուշիի ազատագրումով Ստեփանակերտը մի փոքր շունչ քաշեց, բայց երբ ազատագրեցին Աղդամը՝ Ստեփանակերտի նկուղներում

ծնված երեխաներն արդեն դուրս եկան նկուղներից:

Ազատամարտիկն իր հիացմունքն արտահայտեց միջոցառման կազմակերպչի և մասնակիցների նախաձեռնության հանդեպ: Նրա կարծիքով՝ թեև այս երիտասարդները պատերազմական գործողությունների չեն մասնակցել, բայց բեմի վրա անկեղծորեն հուզվում էին: Ա. Սերոբյանը հույս հայտնեց, որ Արցախի պատերազմի մասին ողջ ճշմարտությունը սերունդները կփոխանցեն իրար որպես հայրենասիրության դաս:

Ելույթ ունեցան Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դասախոս, ազատամարտիկ Աղվան Մխիթարյանը և Մանկավարժական համալսարանի գրադարանի տնօրեն Տիգրան Պետրոսյանցը:

«Այս դասը հիշողության դաս էր, որը մեկ անգամ ևս փաստեց, որ մենք կանք, պիտի լինենք ու դեռ շատանանք»,-ասաց հերոսամարտի մասնակից Տ. Պետրոսյանցը, իսկ Ա. Մխիթարյանը հիշեց պատերազմի սկիզբը, երբ Մանկավարժական համալսարանի կամավորները մեկնեցին պատերազմ, և ապրիլյան պատերազմը, երբ նոր սերունդը քաջության օրինակներ տվեց:

Միջոցառումն ամփոփեց դասախոսը՝ Մարիամ Եղյանը, ով լրագրողների հարցին, թե մեր օրերում Անդրանիկներ ծնվո՞ւմ են, պատասխանել է. «Ցանկացած հայ երիտասարդ Անդրանիկ է, միայն թե չեմ ցանկանա, որ Անդրանիկի նման պայքարելու առիթներ ստեղծվեն երբևէ»:

«Կանք, պիտի լինենք ու դեռ շատանանք» խորագրով միջոցառումն ավարտվեց, իսկ հայրենասիրության դասերը Մանկավարժական համալսարանում շարունակվում են:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

«ԴասԱ»-ն վարժարանում

Ասում են՝ երաժշտությունը հոգու դեղ է: Ուրեմն կարևոր է հոգու առողջությունը, որը կարող է լինել դասական երաժշտության շնորհիվ:

ՀՊՄՀ հենակետային վարժարանի սաները մասնակցեցին «ԴասԱ» նախաձեռնությանը: Դասը վարում էր Հայաստանի երիտասարդական նվագախմբի գեղարվեստական ղեկավար և դիրիժոր Սերգեյ Սմբատյանը: Նա ներկայացրեց միջոցառման մանրամասները, խոսեց դասական երաժշտության դաստիարակիչ դերի մասին, հավաստեց, որ դասական երաժշտությունը կարող է փոխել մարդկային որակները:

Դասը հետաքրքիր էր, զրույց-քննարկում, ինչն էլ հնարավորություն տվեց աշակերտներին անկաշկանդ շփվելու դիրիժոր Սերգեյ Սմբատյանի հետ: Սա շատ ոգևորիչ և տպավորիչ դաս էր աշակերտների համար:

Միջոցառման ընթացքում սովորողներին իր ելույթով ողջունեց ջութակահար Արաքսյա Պողոսյանը՝ հանդես գալով Կոմիտասի «Կռունկ» ստեղծագործությամբ:



Վարժարանի տնօրեն Նաիրա Սաֆարյանը շնորհակալություն հայտնեց նախաձեռնողներին և հավաստեց, որ վարժարանի հետ սիրով ներկա կլինի նաև հաջորդ միջոցառումներին: Նա շնորհակալություն հայտնեց Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Սերգեյ Սմբատյանին, իր ինքնատիպ, հետաքրքիր ու նորարարական մեթոդներով դասական երաժշտությունը ներկայացնելու, հաճելի մթնոլորտ ստեղծելու համար. «Մեծ հպարտությամբ կարող ենք հավաստել, որ նմանատիպ դասերի արդյունքում հնարավոր կդառնա լուծել մշակութային բարձր արժեքները դպրոց բերելու, մեր աշակերտներին դասական երաժշտություն լսել սովորեցնելու հարցը»,-ասաց տնօրենը:

Վստահ ենք՝ ծրագիրը ծառայելու է նպատակին ու ձևավորելու է դասական մշակույթը գնահատող ու սիրող անհատներ:

Շնորհակալություն...

«Լուսանկարչության մեջ ամենից կարևորը պահի արձանագրումն է»

Դիմանկարներ, քաղաքական անցուդարձ, գյուղական կոլորիտային կենցաղից մինչև հայաստանյան գեղեցիկ համայնապատկերներ. իրականության այս բացառիկ պատառիկներն էին անմահացել ՀՊՄՀ օպերատորության և լուսանկարչության բաժնի 25 ուսանողի աշխատանքներում: Թեքեյան մշակութային կենտրոնում «Ծաղկած քարերի երկիր» խորագրով բացված ցուցահանդեսն իր տեսակով աննախադեպ էր. Թեքեյան մշակութային միությունը Մանկավարժական համալսարանի հետ առաջին անգամ էր հանդես գալիս համատեղ նախաձեռնությամբ:

Խոսքում անդրադարձավ լուսանկարչի մասնագիտական դերին, և խոստացավ՝ ամեն ինչ կանի, որ վերականգնվի գեղարվեստական լուսանկարչության ասպարեզում տարիներ առաջ Թեքեյան կենտրոնի կողմից կազմակերպվող մրցանակաբաշխությունը:

«Լուսանկարչության մեջ ամենից կարևորը պահի արձանագրումն է պատմության մեջ, ամեն վաղանցուկ բանի անմահացումը: Եթե ձեր գործը հաջող է, նշանակում է ձեր հոգու դրոշմը տեղավորում եք լուսանկարի մեջ, ինչը հետագայում արվեստի գործ է դառնալու»,- ասաց

«Սա լավ հնարավորություն է, երբ ուսանողների աշխատանքների կողքին ներկայացված են օպերատորության և գեղարվեստական լուսանկարչության ամբիոնի դոցենտ Սամվել Սևադայի աշխատանքները»,- ասաց օպերատորության, գեղարվեստական լուսանկարչության և սոցիալ-մշակութային գործունեության ամբիոնի վարիչ Ռուբեն Երզինկյանը: Անդրադառնալով ուսանող-վարպետ համատեղ ցուցահանդեսին՝ պրոֆեսոր Երզինկյանն ընդգծեց, որ թեև քայլի նպատակը ուսանողին ոգևորելն է, բայցևայնպես ցուցադրված լուսանկարները արժանի են ներկայացվելու վարպետի գործերի կողքին:

Սամվել Սևադան ցուցահանդեսը համարեց ստացված և գեղեցիկ: Նա բարձր գնահատեց համալսարանի պատրաստակամությունը ուսանողին մշտապես խրախուսելու, ուսանողակենտրոն քաղաքականություն վարելու, մասնավորապես լուսանկարների տպագրությունն իրագործելու համար:

Համալսարանի ռեկտորն իր ողջույնի գրող, հրապարակախոս Երվանդ Ազատյանը, ավելացնելով, որ Ս. Սևադան կարողանում է պահել գեղարվեստական և փաստագրական լուսանկարչության միությունը:

Ցուցասրահի պատերը զարդարող ինքնատիպ լուսանկարների շուրջ համախմբված մտավորականներն ու հյուրերը խոսեցին իրականության անկաշառ ու անաչառ արձանագրողի՝ լուսանկարչի մասնագիտության կարևորության, պատմությանն ուղված ազդեցության և մասնագիտության հնարավորությունների մասին:

Ուսանողներն էլ շնորհակալություն հայտնեցին պրոֆեսորադասախոսական կազմին՝ արձանագրելով, որ ֆակուլտետի ուսանողները գրավել են մեդիադաշտը և պարբերաբար աչքի են ընկնում իրենց հաջողություններով:

Առաջիկայում կլինեն ցուցահանդեսներ Հայաստանի բնության թանգարանում, Երևանի քաղաքապետարանում՝ «Մայրաքաղաք Երևան» թեմայով:

Սյուզի ԿՂՄԵՍՅԱՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնն ամեն տարի անց է կացնում մագիստրոսների գիտաժողով, որը մագիստրոսական թեզերի պաշտպանությանը նախորդող հետաքրքիր փորձառություն է, գիտելիքների յուրօրինակ ստուգում: Այս անգամ մագիստրսների գիտաժողովն անցկացվեց «Մանկավարժության արդի հիմնախնդիրներ, լուծումներ» խորագրով:

Ինչպես իր ելույթում ասաց մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ամիդա Թոփուզյանը՝ այս գիտաժողովը թեզերի պաշտպանությունից առաջ լավագույն հնարավորություն է ամփոփելու, ի մի բերելու այն ամբողջ գիտահետազոտական աշխատանքը, որ ուսանողները կատարել են երկու տարվա ընթացքում: Նա ընդգծեց, որ այս օրերին հանրապետության բուհական ոլորտի մասին տարբեր քննարկումներ են ընթանում՝ մատնանշելով, որ բուհը բացի կրթական գործունեություն ծավալելուց պետք է վերածվի գիտահետազոտական կենտրոնների:

«Մանկավարժությունն անընդհատ փոփոխվող, կիրառական գիտություն է»,- ասաց Ա. Թոփուզյանը՝ հիշեցնելով, որ կրթությունը էվոլյուցիոն ճանապարհ է սիրում, ոչ թե հեղափոխական: Բանախոսը կարևորեց գիտաժողովում ընդգրկված զեկուցումների արդիականությունը, հույս հայտնելով, որ քննարկումները կլինեն արդյունավետ և օգտակար:

Ա. Թոփուզյանը նաև նկատեց՝ ուսանողն ուսումնառության տարիներին կարող է իր ռեֆերատը, կուրսային աշխատանքը զարգացնել, դարձնել թեզ և շարունակել զարգացնել հետազոտական նյութը ասպիրանտուրայում:

Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Հեղինե Խաչատրյանը ողջունեց ավանդական դարձած գիտաժողովի անցկացումը որպես մագիստրոսների թեմաների պաշտպանությունից առաջ կարևոր փորձաշրջան: Դեկանն ընդգծեց, որ այսօրվա արագ փոփոխվող ու զարգացող աշխարհին պետք է համընթաց քայլել:

«Մանկավարժությունն էլ դոգմաներ չի սիրում և պետք են հետազոտական նոր փոփոխություններ, փաստեր ոչ միայն մանկավարժության մեջ, այլև ձեր մտքում ու վարքագծում»,-ասաց նա:

Լիագումար նիստում զեկուցումներ ներկայացրին մագիստրոսական 2-րդ կուրսի ուսանողներ Միշա Թադևոսյանը («Աշխատանքի վրա հիմնված ուսուցման կազմակերպման հնարավորությունները ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում»), Անահիտ Հովակիմյանը (Բուհի մանկավարժական պրակտիկան որպես ուսանողի մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման միջոց ՀՊՄՀ և ԲՊՄՀ բակալավրիատների օրինակների հիման վրա), Էմմա Կոստանյանը («Քոուչինգը որպես ժամանակակից ուսուցչի մասնագիտական մանկավարժական կոմպետենցիա»), Մերի Դալլաքյանը («Կամավորության զարգացման ուղիները»):

Գիտաժողովը շարունակվեց մասնախմբերում ակտիվ և բուռն աշխատանքային քննարկումներով:

Ս. ԱՍՐՅԱՆ

Ամփոփվեցին օլիմպիադայի արդյունքները

Ամփոփվեցին ՀՊՄՀ-ի Մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպված օլիմպիադայի արդյունքները:

Ամենամյա օլիմպիադային այս տարի մասնակցեցին նաև ավագ դպրոցների աշակերտները՝ 54 մասնակից Երևանի № 104 հիմնական, Լեռնանիստի Ս. Նազարյանի անվան միջնակարգ, Ս. Գևորգյանի անվան № 189, Վայքի, ինչպես նաև ՀՊՄՀ-ի հենակետային դպրոցներից:

Արդյունքների ամփոփմամբ՝ ավագ դպրոցականների շրջանում 1-ին տեղում ՀՊՄՀ Հենակետային վարժարանի 11-րդ դասարանի աշակերտուհի Արինե Մխիթարյանն էր, 2-րդ տեղում՝ Լեռնանիստի միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Լիդա Գրիգորյանը, իսկ 3-րդում՝ Երևանի № 189 ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Աննա Միրզոյանը:

Բակալավրերի շրջանում 1-ին տեղի մրցանակը հանձնվեց Սոցիալական մանկավարժություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Սոնա Խաչատրյանին, 2-րդը՝ նույն բաժնի ուսանողուհի Աննա Հայրապետյանին, իսկ 3-րդ մրցանակը՝ նույն բաժնի հեռակա 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Մարկոսյանին:

Մագիստրոսների շրջանում 1-ին տեղի մրցանակը հանձնվեց Աշխարհագրության բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի Շուշան Աբովյանին, 2-րդը՝ սոցիալական մանկավարժության բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի Անահիտ Ադամյանին, իսկ 3-րդ մրցանակը՝ տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Մերի Քոչինյանին:

Մրցանակներ և հավաստագրեր հանձնվեցին նաև «Լավագույն հռետոր», «Հաջողված ելույթ», «Կրկնակի հաջողակ», «Լսարանի համակրանք», «Լավագույն ելույթ» և այլ անվանակարգերում հաղթող ճանաչված ուսանողներին և աշակերտներին:

Նվիրված էր Հանրապետության օրվան

Քաղաքագիտության և իրավունքի պատմության ամբիոնի «Պետականության հիմնախնդիրը Հայաստանում. «Պատմություն և արդիականություն» խորագրով ուսանողական ամենամյա գիտաժողովն այս անգամ նվիրված էր Հանրապետության օրվան:

Օրակարգում լսեցին յոթ զեկուցում, որոնք վերաբերում էին 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության հռչակման և կայացման պատմական նշանակությանն ու ներքին դրությանը, քաղաքացիական հասարակության խնդիրներին մերօրյա Հայաստանում, պետականության ստեղծման գործում քաղաքական մշակույթի հիմնարար դերին, Հայաստանի առաջին հանրապետությունում պառլամենտարիզմին, Հայաստանում իրավաքաղաքական գիտակցության ձևավորման արդի հիմնախնդիրներին, Վանի ինքնապաշտպանության շրջանին՝ որպես Հայաստանի Հանրապետության նախատիպի, և Համո Օհանջանյանի քաղաքական գործունեությանը:

Զեկուցողներ Քրիստինե Ավետիսյանը, Անի Մելքոնյանը, Լիլիթ Զահաբին, Էլմիրա Ազարյանը, Մանե Նիկողոսյանը, Անի Թաթոյանը, Արա Հարությունյանը, Տաթև Արշակյանը, Օլիկ Թոսունյանը և Զեմմա Վարդանյանը հանգամանորեն ներկայացրին իրենց զեկուցումներում առաջ քաշած խնդիրները՝ դրանք վերլուծելով պատմաքաղաքական ժամանակաշրջանի իրադարձությունների համապատկերում:

Նիստը վարում էր քաղաքագիտության և իրավունքի պատմության ամբիոնի վարիչ, դոկտոր, պրոֆեսոր Լևոն Շիրինյանը: Նա կարևորեց ուսանողական ընթերցումներում առաջ քաշված հիմնախնդիրները, պատմական իրադարձությունների վերլուծությունները, ժամանակաշրջանի բնութագրումները և ուսանողների նորովի մոտեցումները անցյալի պատմությանը: Գիտաժողովն աչքի ընկավ նաև ուսանողների ակտիվ քննարկումներով ոչ միայն անցյալի, այլև մերօրյա քաղաքական իրավիճակներին վերաբերող հարցադրումներով:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Յուրաքանչյուր հրաժեշտ նորի սկիզբ է

Յուրաքանչյուր հրաժեշտ յուրովի հուզիչ է ու գեղեցիկ, յուրաքանչյուր հրաժեշտ նաև իր մեջ մի նոր սկզբի խորհուրդն ունի…

Կուլտուրայի ֆակուլտետի դահլիճում ՀՊՄՀ հիմնական դպրոցի 4-րդ Ա դասարանի աշակերտները ներկայացրին «Հրաժեշտ տարրական դասարանին» խորագրով միջոցառումը: Աշակերտները բեմի վրա համարձակ էին և ինքնավստահ. նախ հիշեցին առաջին դասարանի շեմին ոտք դնելիս «սրտի անսովոր տրոփյունը», որին հաջորդեցին չորս տարիների գեղեցիկ ու անմոռանալի պահերը: Երգ ու պարով, ջերմությամբ ու սիրով ներկայացրին առաջին ուսուցչուհուն՝ Աննա Գրիգորյանին և բոլոր մյուս ուսուցիչներին, գնահատանքի խոսքեր հղեցին մոր նման իրենց հոգատարությամբ պարուրած

ուսուցիչներին, որոնք գիտելիքի ու ճանաչողության դռներն են բացել իրենց առջև: Ի՞նչ սովորեցին այս տարիների ընթացքում. «Տառն ու գիրը մեզ ընկեր դարձան, սովորեցինք ռուսերեն և անգլերեն, մաթիմատիկայով տրամաբանել…»: Այո, բոլոր դասերն էլ կարևոր են, բայց ամենակարևորը բարեկրթության դասն է, ամենից առաջ պետք է սովորեն բարեկիրթ լինել… Իզուր չէ, որ տնօրեն Նաիրա Տողանյանն իր ելույթում նրանց անվանեց դպրոցի «փոքրիկ ջենտլմեններ». այս դասարանում տղաները գերակշռում են և աչքի են ընկնում իրենց վարքով:

Փոքրիկներն անկեղծ ու անմիջական բեմական կատարումներով հիացրին ուսուցիչներին, տնօրենին, ծնողներին և հյուրերին. հայրենիք, ծնողներ, հերոսներ, անհոգ մանկություն՝ ահա այն թեմաները, որոնց անդրադարձան իրենց ելույթներում, ինչպես նաև ներկայացրին բեմադրության պատառիկներ…Աշակերտները «փորձեցին կանգնեցնել» ժամանակը, որ պահպանեն «արծաթագույն մոլորակի քաղցր մանկությունը»:

Իսկ վերջում ամփոփեցին՝ մենք չենք գնում, սա մեր մուտքն էր դեպի միջին դասարան, սա ընդամենը մեր կյանքի մեկ քայլն էր, իսկ ամենակարևոր քայլերը դեռ առջևում են…

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Առաջին քայլերը՝ ժամանակի հրամայականով

ՀՊՄՀ Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի «Լանդշաֆտային պլանավորում» մասնագիտությունն այս տարի կունենա իր առաջին մագիստրոս շրջանավարտները:

Պետք է նշել, որ ուսմանը զուգահեռ մագիստրոսները կատարում են գործնական առաջին քայլերը մասնագիտական ոլորտում: Առաջնորդվելով քաղաքային միջավայրի բարեկարգման ժամանակի հրամայականով՝ «Լանդշաֆտային պլանավորում» մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Թամարա Մնացականյանի առաջարկով Երևան քաղաքում իրականացվել է լանդշաֆտային պլանավորման փորձ:

Մագիստրոսի անմիջական մասնակցությամբ Դավիթաշեն համայքի Սասնա Ծռեր և Ա. Միկոյան փողոցների ուղեկապի հատվածում մշակվել և իրականացվել է «Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիր: Հողատարածքի դատարկ հատվածում կատարվել է խորշի լիցք, ճեմապատվել թեք հաստվածը, իսկ հարթ և ուղիղ հատվածը՝ պատվել բուսահողով: Կատարվել է նաև ցանքս, իսկ գեղագիտական տեսքի համար իրականացվել է ծառատունկ, տնկվել են ծաղիկներ և անցկացվել ոռոգման ցանց:

Այն հավակնում է տեղ գտնել համայնքի տարածքային զարգացման, մասնավորապես լանդշաֆտային կառուցապատման և կանաչապատման հեռանկարային ծրագրերում:



Արարման խաչմերուկում…

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի նախասրահում բացվել էր ֆակուլտետի Ուխ նախագահ, մագիստրոս Զարուհի Խաչատրյանի աշխատանքների ցուցահանդեսը: «Արարման խաչմերուկում» խորագիրը կրող ցուցադրությանը ներկայացված էին մագիստրոսի տարբեր տարիների աշխատանքները՝ վարժարանում ուսանելու տարիներից մինչև մագիստրատուրա:

Ուսանողուհու կարծիքով նման ցուցադրությունը, որտեղ ներկայացված են նաև «Դալի» նկարչական դպրոցի իր սաների աշխատանքները, յուրօրինակ ձևաչափ է ամփոփելու ուսանողական տարիների ստեղծագործական կյանքն ու շնորհակալություն հայտնել դասախոսներին՝ գիտելիքներ և արվեստի հանդեպ սերն իրեն փոխանցելու համար:

«Ես թևակոխում եմ կյանքի նոր փուլ և արարման խաչմերուկում արդեն իսկ կողմնորոշվել եմ՝ գնալ արվեստի ուղղությամբ»,-նշեց Զարուհի Խաչատրյանն ու վստահեցրեց՝ միևնույն ժամանակ կզբաղվի նաև մանկավարժությամբ. այն օգնում է ինքնակատարելագործվել:

Գեղարվեստական կրթության ֆակուլտետի դեկան Արա Հակոբյանը շնորհավորեց Զարուհի Խաչատրյանին ցուցահանդեսի բացման առթիվ, բարձր գնահատեց նրա աշխատանքները և՛ որպես պրոֆեսիոնալ նկարչի, և՛ որպես հասարակական ակտիվ գործունեությամբ զբաղվող ուսանողի:

«Սա երկու միջոցառում է մեկ հարկի տակ. ներկայացված են ուսանողի՝ մեծ վարպետությամբ կատարված աշխատանքները և դրանց կողքին՝ նրա մանկավարժական գործունեության արդյունքը: Նրա սաների աշխատանքներից ևս հորդում է մանկան մաքրություն, ինչը խոսուն վկան է մեր շրջանավարտի՝ հաջողված մանկավարժ լինելու մասին»,-հավելեց ֆակուլտետի դեկանը:

Ցուցադրության առթիվ ուսանողին շնորհավորեց նաև Կերպարվեստի ամբիոնի վարիչ Կարեն Աղամյանը և ասաց. «Թեև երկար տարիներ չէ, որ աշխատում է բուհում, բայց մշտապես զգացել է՝ Գեղարվեստական կրթության ֆակուլտետում հաճախ են կազմակերպվում ցուցադրություններ, մշակութային ձեռնարկներ. դա Զարուհի Խաչատրյանի՝ որպես ուսանողական խորհրդի նախագահի հաջողված գործունեության մասին է վկայում»:

Ուսանող, գեղանկարչություն, հասարակական և գիտահետազոտական աշխատանք. սրանք այն ոլորտներն են, որոնցում ուսանողուհու աշխատանքը բարձր գնահատեց կերպարվեստի ամբիոնի պրոֆեսոր Լեմս Ներսիսյանը և հույս հայտնեց, որ հետազոտական աշխատանքի արդյունքները հատկապես տեղ կգտնեն նկարչության ապագա ուսուցիչների մանկավարժական պրակտիկայում:

Ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանն էլ կառույցի անունից շնորհակալություն հայտնեց Զարուհի Խաչատրյանին համատեղ արգասաբեր աշխատանքի համար և նրան շնորհակալագիր հանձնեց:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԴԴՄԱՐՎԵՍՏԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՍՐԱՀՈՒՄ

Թանգարանային գիշերվա նախօրեին՝ մայիսի 17-ին, Մանկավարժական համալսարանում բացվեց դդմարվեստի ցուցահանդես: Ցուցահանդեսում ներկայացված էին նաև համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի կիրառական արվեստ մասնագիտության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Հերիքնազ Խաչիկյանի և նրա աշակերտների աշխատանքները:

Հերիքնազը Արմավիրի մարզի Երվանդաշատ գյուղից է: Նա դդմարվեստ ճյուղի վերականգնող է, ինքնուրույն աճեցնում է կուռմադդումներ, վերամշակում և զարդարում դրանք: Դա տևական և հատուկ խնամք պահանջող աշխատանք է:

Հերիքնազը կարծում է՝ դդմարվեստը վաղուց է եղել Հայաստանում, ինքը պարզապես փորձում է վերականգնել այն:

«Հարավային Աֆրիկան հայտնի է որպես կուռմադդումների հայրենիք, սակայն Ասիայում և Ամերիկայի բնիկ ժողովուրդների մոտ ևս եղել են դդմի ձևավորման և կիրառման հնագույն ավանդույթներ,-պատմում է նա:- Գ. Սրվանձտյանցի հաղորդմամբ՝ Վանում, Քրիստոսի ծննդյան ճրագալույցին, երեխաները չոր կուռմադդումները ծակծկում, մեջը վառած ճրագ էին դնում: Երեմիա Տեր Սարգսյան-Տևականցու նկարագրության համաձայն՝ դդմի անցքերը նկարակերպ էին: Երբ դդումը ուշ երեկոյան թելով կախում էին հարևանների երդիկներից ներս, ճրագալույցը ուշադրություն էր գրավում: Այդ ժամանակ երեխաները չոր մրգեր և այլ մթերքներ ստանալու ակնկալությամբ երգում էին»:

Ցուցահանդեսում ամենատարբեր թեմաներով զարդարված դդմիկները աչք էին շոյում: Մայր ու դուստր Մարիաննա և Ջուլիանա դդմիկների վրա պատկերել էին Փոքրիկ Իշխանին: Գագիկ անունով դպրոցականը, որ Հերիքնազի զարմիկն է, ոգեշնչվել է բարեկամուհուց: Նրա համար այս արվեստը հաճելի զբաղմունք է, արվեստի այս ճյուղին նվիրվելու լավագույն հնարավորություն:

Հերիքնազը մեր զրույցի ընթացքում կարևորում է նման խմբակային ցուցահանդեսը, ընդգծում, որ կուռմադդումներով իր աշխատանքը նաև բնապահպանական խնդիրներ է լուծում: Նրա դդումները զարդանախշված են բնաշխարհի բոլոր գույներով և համալսարանի սրահում կարծես բնության վրձնած պատառիկներ լինեն:

ՀՊՄՀ թանգարանի նախաձեռնությամբ կազմակերպված ցուցահանդեսի մյուս մասն առավել հետաքրքիր է համալսարան այցելած կրտսեր դպրոցականների համար. նրանց ուղեկցում է դասվարը՝ Երևանի Հայրապետ Հայրապետյանի անվան № 78 հիմնական դպրոցի դասվար Աննա Գալստյանը, ով նաև Մանկավարժական համալսարանի մասնագիտական կրթության և կիրառական մանկավարժության ամբիոնի հայցորդ է:

Թանգարանի տնօրեն Ալվարդ Գրիգորյանը նախ հարցազրույց է անցկացնում փոքրիկ այցելուների հետ, ապա դպրոցականները հարմար տեղավորվում են սեղանների շուրջ շարված աթոռներին և սկսվում է վարպետության դասը:

ԳԵՂԵՑԻԿ ՍԻՐՈ ՄԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական համալսարանի Օտար լեզուների ֆակուլտետի անգլիական առաջին կուրսի ուսանողները խնամքով էին նախապատրաստվել իրենց անդրանիկ միջոցառմանը: Թեման հետաքրքիր էր. մերօրյա սիրո պատմություն, որը փորձությունների միջով անցավ, բայց հաղթեց…Այո, սիրով պայքարում են, սիրով հաղթում…

Առաջին կուրսի ուսանողուհի Յանա Երզնկյանն իր տարերքի մեջ է. նա է առաջ մղում ցերեկույթի ընթացքը, վարժ անգլերենով հարցեր է տալիս կուրսընկերուհիներին և ստանում սպառիչ պատասխաններ:

Հայաստանի ազգային հերոս Մոնթե Մելքոնյանի և նրա կնոջ՝ Սեդայի սիրո հուզիչ պատմությունը ուսանողները դարձրել էին իրենց միջոցառման առանցքը, որի շուրջ այնքան վարժ ու համարձակ անգլերենով ներկայացնում էին գարնան, մայիսյան հերոսամարտերի, պատերազմի ու խաղաղության, սիրո և հաղթանակների պատմությունը: Ռոմեոյի և Ջուլիետի պատմությունից նրանք նրբորեն անցում կատարեցին դեպի հայկական իրականություն, անգլերեն խոսքն ու երգը համեմեցին հայկական երգ ու պարով:

Միջոցառման ընթացքում տեսասահիկներով ներկայացվում էին Մոնթեի կյանքի դրվագներից: Ահա Սեդան զինվորականի հագուստով սեղանի առաջ նստած նամակ է գրում և բարձրաձայն կարդում, իսկ լռության մեջ անգլերեն հնչող «Հայր մեր»-ը նույնքան խորհրդավոր է…

Միջոցառումն ավարտվում է «Երազ իմ, երկիր Հայաստան» երգի կատարումով: Լսարանում ալիքվում է հպարտության ոգին…

Դասախոս և կուրսղեկ Անի Քեռյանը հպարտ է. ուսանողները արդարացրին իր հույսերը, նրանք կարողանում են դրսևորել անգլերեն լեզվի իմացությունը, ճիշտ արտաբերել և պահպանել օտար լեզվի հնչերանգը: Նա ասում է, որ փորձել են Մոնթեի և Սեդայի սիրո պատմության միջոցով ներկայացնել տարբեր արժեքներ՝ անձնազոհություն, սեփական կյանքը և սերը հայրենիքին նվիրաբերելու խիզախություն, սերը՝ պատերազմը հաղթելու զորավոր միջոց…

Ուսանողուհիներ Յանա Երզնկյանը, Հերմինե Քոչարյանը, Վերգինե Ազիզյանը, Մարինե Աբրահամյանը պատմում են, թե ինչպես ծնվեց միջոցառման նախաձեռնությունը. որոշեցին գարունը, մայիսը, սերը և պատերազմը մեկտեղ ներկայացնել՝ մատուցելով այն գաղափարը, թե ինչպես սերը հաղթեց Արցախի պատերազմում… Միաժամանակ փաստում են, որ սա լավ հնարավորություն է՝ զարգացնելու իրենց լեզվական գիտելիքները:

Միջոցառման ավարտին ելույթ է ունենում գերմանական ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Ելենա Մխիթարյանը: Նա շնորհակալություն է հայտնում առաջին կուրսեցիներին հետաքրքիր ու գեղեցիկ միջոցառման, ստացած գիտելիքները համարձակ ներկայացնելու և լավ մեկնարկի համար:

Միջոցառումը հուզվելու և հպարտանալու զգացողություններով համակեց ներկաներին. լավ սկիզբը ենթադրում է հետաքրքիր շարունակականություն:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

«Մեր ժողովուրդն իմաստուն է»

Շուտասելուկներ, սուտասելուկներ, էպոս, խաղիկներ, տաղիկներ, օրորներ ու հանելուկներ, առածներ, ասացվածքներ, խնդուկներ, ավանդություն և այլն. ժողովրդական բանահյուսության նմուշներն այսօր հանդիսատեսին ներկայացրին ՀՊՄՀ-ի հիմնական դպրոցի 2 ա դասարանի աշակերտները:

Միջոցառման նպատակն էր յուրատեսակ հաշվետվություն ներկայացնել Մայրենի և Երաժշտություն առարկաների 2-րդ դասարանի դասագրքերի վերաբերյալ՝ ուսումնական ողջ նյութը ներկայացնելով բեմադրություններով ու երգերով:

«Մեր ժողովուրդն իմաստուն է» խորագրով միջոցառմանը աշակերտները ներկայացրին ժողովրդական իմաստության նմուշներ՝ նշելով, որ հենց այդ իմաստության շնորհիվ ժողովուրդը սերնդեսերունդ փոխանցել է իմացածն ու փորձը, գիտակցել՝ լեզուն է ազգի պահպանման հիմքը: Փոքրիկները խոստացան դրանց հետևել իբրև պատգամների, որովհետև դրանք կյանքով փորձված իմաստություններ են, որ ժողովուրդը խնամքով պահել է ու փոխանցել մինչև մեր օրերը:

Դասվար Կարինե Չիբուխչյանը հպարտ է, որ աշակերտները կարողացան հաղթահարել բոլոր դժվարությունները և հանդիսատեսին հասցրին ժողովրդական բառն ու բանը: Բացի այդ, սա ոչ միայն միջառարկայական կապերի ամրապնդման, այլև դասագրքերի շուրջ եղած տարածայնությունները, կարծիքները մեկնաբանելու յուրահատուկ հաջողված ձեռնարկ է:

«Ինչպես բանահյուսության նմուշները, այնպես էլ ժողովրդական երգերը աշակերտները ողջ տարվա ընթացքում սովորել են մեծ հաճույքով, կարողացել զգալ, հասկանալ ժողովրդական դարավոր կենսափորձը և այն փոխանցել սերնդեսերունդ»,-նշեց դասվարն ու իր սաներին, ներկաներին հորդորեց իրենց խոսքում օգտագործել դրանք, որոնք խոսքը դարձնում են ոչ միայն դիպուկ, համոզիչ ու ազդեցիկ, այլև խոսքին տալիս է շուք ու գեղեցկություն:

Հիմնական դպրոցի տնօրեն Նաիրա Տողանյանը շնորհակալություն հայտնեց դասվար Կարինե Չիբուխչյանին, երեխաներին, ծնողներին և հավելեց՝ սա իր կյանքի ամենաարագ անցած մեկուկես ժամն էր:

«Ասել հիացած եմ, հուզված եմ՝ նշանակում է ոչինչ չասել: Սա մի դասարան է, ուր մտնելիս պետք է զգոն ու զգաստ լինել. նրանք զինված են գիտելիքներով, որ ստիպում է վստահ լինել՝ մենք փայլուն ապագա ունենք»,-հավելեց տնօրենն ու Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Հեղինե Խաչատրյանի անունից աշակերտներին հանձնեց «Սկզբնական կրթության ֆակուլտետի բարեկամ»-ի հավաստագիր:

Միջոցառմանը ներկա էին նաև Մայրենի և Երաժշտություն առարկաների դասագրքերի հեղինակները. Վաչագան Սարգսյանը խոստովանեց՝ բազմաթիվ միջոցառումների է ներկա եղել, սակայն վաղուց նման համով-հոտով միջոցառման չէր մասնակցել: Հեղինակը շնորհակալություն հայտնեց դասվար Կարինե Չիբուխչյանին և աշակերտներին, որոնք դասագրքի նյութից կարողացել էին ստեղծել հետաքրքիր միջոցառում:

Միջոցառման ավարտին աշակերտները բեմադրեցին Վաչագան Սարգսյանի «Երեք աղջիկների հեքիաթը». այն ավարտվեց այնպես, ինչպես հեքիաթներում՝ երկնքից երեք խնձոր ընկավ՝ մեկն ասողին, մեկը՝ լսողին, մյուսն էլ՝ հեքիաթը գրողին:

Քրիստինե ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

Մանկավարժական համալսարանի հենակետային վարժարանը 25 տարեկան է: Հոբելյանական տարվա շրջանավարտների «Վերջին զանգի» արարողության մեկնարկը տրվում է համալսարանի մեծ դահլիճում. 118 շրջանավարտ «պատրաստվում է թռիչքի» դեպի գալիքը, իսկ այն հետաձգվում է... Եվ այստեղ է, որ շրջանավարտները խորհում են, փորձում հասկանալ, թե ինչ է պետք դեպի նոր կյանք, դեպի ապագա թռչելու համար և հասկանում են. «Դեպի ապագա գնալու համար մեր անցյալը պիտի իմանանք»...

Լրագրողական հոսքի շրջանավարտները փորձում են հետաքննություն անցկացնել և վարժարանի արխիվները փորփրելով հասկանալ կրթօջախի սկիզբը, ընթացքը և ավարտը... Նրանք մտովի հետ են գնում դեպի 1994 թվական՝ պատերազմ, սով, ցուրտ... Այս պայմաններում է հիմնադրվում հանրապետությունում առաջին հենակետային ավագ դպրոց-վարժարանը, որի նախաձեռնող-հիմնադիրը ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ Ալեքսանդր Ղուշչյանն է: 80-ամյա պատկառելի տարիքի բարձունքից այսօր նա հպարտության բազում պահեր է ապրում, շրջանավարտների հետ մտովի նորից թերթում 25 տարվա տարեգրության էջերը: 1997 թվականին նորից Ա. Ղուշչյանի ջանքերով Մակավարժական համալսարանում հիմնադրվում է «Իմաստասեր» վարժարանը: Շրջանավարտները Ա. Ղուշչյանին շնորհակալության ու շնորհավորանքի ջերմ խոսքեր են հղում, որոնք «ամրագրում են հավաստագրով»:

Վարժարանի մյուս նվիրյալը և 25 տարվա ուղեկիցը ներկայիս տնօրեն Նարիա Սաֆարյանն է: Նա գերազանցությամբ է ավարտել Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Ֆիզմաթ ֆակուլտետը, ֆիզմաթ գիտությունների թեկնածու, դոցենտ է: Շրջանավարտները գեղեցիկ խոսքերով բնութագրում են նրան, թվարկում մարդկային բարձր որակները՝ ամփոփելով. «Ամենաբարձր կոչումն ու պարգևը Դուք վաստակել եք՝ դա Մարդ կոչումն է»:

Շրջանավարտները ժամանակահատվածների են բաժանում վարժարանի 25 տարիները՝ մանկություն (1994-2004), երիտասարդության սեմին (2010-2014), հասունություն (2015-2019...):

Այնուհետև կողք կողքի իրենց հրաժեշտի տոնական ծրագրերն են ներկայացնում տարբեր հոսքերի շրջանավարտները:

Բեմի վրա մասնագիտությունների գունապնակն է. լրագրողներն իրենց խոսքն են ասում՝ վստահ, որ հենց իրենցից է կախված օբյեկտիվ տեղեկատվության ապահովումը, նկարիչներն ամեն ինչ տեսնում են գույնի, լույսի ու ստվերի միջոցով. նրանք գեղարվեստական մտածողություն ունեն և մարդուն կարող են կտրել իրականությունից...

Անգլերենի մասնագիտական ենթահոսքի շրջանավարտները հպարտանում են անգլերենի իմացությամբ. նրանք ինքնավստահ են, առաջադեմ, որովհետև միջազգային հարթակներում կարող են անթերի խոսել անգլերեն...

Մաթեմատիկոսների համար մաթեմատիկան ոչ միայն ճշգրիտ գիտություն է, այլև տիեզերքում հնչող երաժշտություն. «համենայնդեպս այդպես են ասում մաթեմատիկայի ուսուցիչները»: Մաթեմատիկան օգնում է ոչ միայն լուծել մաթեմատիկական, այլև կյանքի բարդ խնդիրները...

Շրջանավարտների բացահայտում-խոստովանությունները իրար են հաջորդում. «Հոգեբանությունն օգնում է ոչ միայն հասկանալ ինքներս մեզ, այլև ուրիշներին... Ահա ինչու ընտրեցինք հոգիները քննող այս մասնագիտությունը»:

Եվ այսպես, եկել է ժամանակը՝ արտահայտելու հոգում կուտակվածը, որովհետև՝ «վարժարանը լոկ տարածություն, սովորելու տեղ, շենք չէ, վարժարանը մենք ենք...»:

Հարուստ ու գեղեցիկ է վարժարանի պատմությունը, որի սաներից շատերը ուսումը շարունակել են Մանկավարժական համալսարանում, ապա նորից վերադարձել հարազատ դպրոց՝ այս անգամ արդեն որպես ուսուցիչներ...Վարժարանի պատմության մեջ իրենց լուսավոր էջն ունեն 40 գիտությունների թեկնածուներ:

Հոբելյանական տարվա շրջանավարտները հիշում են վարժարանի առաջին շրջանավարտների անունները՝ Հակոբ Թադևոսյան, Մարինե Մարուքյան, Արամ Հարությունյան, Աննա Ռուբենյան... Նաև փորձում են ամփոփել՝ ինչ տվեց վարժարանն իրենց ուսումնառության երեք տարիների ընթացքում՝ սովորելու համար այս լավագույն ժամանակը ճիշտ օգտագործելու և գնահատելու կարողություններ, սեփական կարողությունները համարձակ ներկայացնելու հնարավորություն, իրավունքներից բացի պարտականությունները գիտակցելու պատասխանատվություն, ընկերներ ողջ կյանքի համար...և Մարդ լինելու կարևորությունը:

Ֆիզմաթ հոսքի շրջանավարտները վստահեցնում են՝ վարժարանը մեզնով է հպարտ ու կանգուն:

Վարժարանն ունի նաև մշակութային հոսք իր ենթահոսքերով... Շրջանավարտները շարունակում են թերթել վարժարանի պատմությունը: Նրանք շնորհակալություն են հայտնում բոլոր տարիների ռեկտորներին, որոնք նպաստել են վարժարանի զարգացմանը, վերջին տարիներին վարժարանի զարգացման գործընթացների աջակիցն է ռեկտոր, պատմական գիտությունների դոկտոր Ռուբեն Միրզախանյանը:

Շրջանավարտները խոսեցին 12-ամյա կրթության, բարեփոխումների, կրթական համակարգի մատուցած մարտահրավերների մասին, բայց և ասացին, որ վարժարանի ակունքներում կանգնած մտավորականները խիզախեցին նորարարական մտածողությամբ ու գործունեությամբ:

Նոր սերունդը ոչնչով հետ չի մնում՝ վստահեցրին. բանիմաց են ու կարողանում են բացահայտել իրենց ներուժը, ուզում են ոչ միայն աշխարհը փոխել դեպի լավը, այլ աշխարհի փորձն ու գիտելքները բերել մեր երկիր...Վերջում բարձրաձայնեցին, որ կարող են դառնալ Հայաստանի վաղվա օրը, նրա ապագան...

Դա ակնհայտ էր: Բեմի վրա հրաժեշտի թախիծն ու կյանքի մի նոր փուլին ընդառաջ գնալու անհանգստությունը միախառնվել էին և դուրս էին հորդում երգի, պարի ու ասմունքի միջոցով... Գեղեցիկ էր և հուզիչ, ուրախ էր և տխուր...Շրջանավարտները հուզվում էին, և այդ հուզմունքի մեջ այնքա՜ն սեր ու ջերմություն կար հարազատ կրթօջախի հանդեպ, այնքան չասված խոսքեր...

«Սա տոն է, որն իր մեջ ամփոփում է 25-ամյա բովանդակալից և բեղմնավոր տարեգրությունը, որի ամեն օրը մի նոր էջ է բացել վարժարանի համար: Բարդ ու դժվարին է եղել այդ ուղին, սակայն հաղթահարվել է շնորհիվ վարժարանի կողքին կանգնած ամենասրտացավ բարեկամների՝ ի դեմս Մանկավարժական համալսարանի: Ես հպարտ եմ, որ իմ ուղին սկսել եմ Մանկավարժական համալսարանից, իսկ մանկավարժական ուղին՝ այս կրթօջախից, և հնարավորություն ունեցել մկրտություն ստանալ վաստակաշատ գիտնականներից: Շնորհակալ եմ 25 տարիների շրջանավարտներին, որոնք թե՛ երկրում, թե՛ նրա սահմաններից դուրս բարձր են պահում վարժարանի պատիվը: Մեր ողջույնները նաև երկրի սահմաններում կանգնած զինվորներին, որոնք ապահովեցին այսօրվա խաղաղ առավոտը: Ես վստահ եմ, որ դուք էլ լինելով Խ. Աբովյանի անունը կրող կրթօջախի ավագ դպրոցի շրջանավարտներ, պատվով կկատարեք ձեր առաքելությունը, կհամալրեք Մանկավարժական համալսարանի լավագույն շրջանավարտների շարքերը, կկրեք լավ ու բարի ավանդույթները»,- ասաց վարժարանի տնօրեն Նարիա Սաֆարյանը:

Եվ քանի որ տարին թումանյանական է՝ տնօրենը խոսքն ավարտեց մեծ բանաստեղծի պատգամով. «Աշխատեք ձեր սիրտը պահել մաքուր ու լիքը ամենալավ ու ամենաբարի զգացմունքներով ու մարդուն նայեցեք բարի սրտով ու պայծառ հայացքով: Գեղեցկություն, բարություն, ճշմարտություն. սրանք են կյանքում հիմնականը»:

«Հպարտության զգացում ունեմ, որ վարժարանը 25-րդ շրջանավարտներին է կյանք ուղարկում. ուրախանում ենք, որ կյանք ենք ուղարկում և տխրում, որ բաժանվում ենք: 1994 թվականի դժվարին պայմաններում ստեղծվեց ուսումնական հաստատություն, որտեղ իրենց մանկավարժական ունակությունները ներդրեցին բազմաթիվ դասախոսներ: Վարժարանի ուսուցիչները մեր պարծանքն են: Հպարտությամբ եմ նշում, որ պատվով ենք հաղթահարել տարատեսակ դժվարությունները»,-ոչ պակաս հուզված ասաց Ալեքսանդր Ղուշչյանը:

Մեկնումի ժամն է. ինքնաթիռը հրավիրում է 118 ուղևոր-շրջանավարտներին և վայրկյաններ անց սլանում դեպի թռիչքուղի...

Շրջանավարտները վերջին մաղթանքներն են հղում իրենց հարազատ կրթօջախի սիրելի, հոգատար ու արևառատ ուսուցիչներին՝ մաղթելով նրանց հար գնահատված լինելու հաճույքը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ԴՊՐՈՑՈՒՄ

ՌԴ-ում ՀՀ դեսպանությանը կից Մոսկվայի «Վերածնունդ» հայկական կիրակնօրյա դպրոցում մայիսի 19-ին տեղի ունեցավ ավանդույթ դարձած 31-րդ «Վերջին զանգ» միջոցառումը, որը նվիրված էր 2018-2019 ուսումնական տարվա ավարտին: Հանդիսավոր միջոցառումը կազմակերպվել էր նախկին Լազարյան ճեմարանի, ներկայիս ՀՀ դեսպանության հանդիսությունների մեծ դահլիճում:

Հնչեց Հայաստանի հիմնը, ապա մեկնարկեց պաշտոնական մասը: Բացման խոսքով հանդես եկավ Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպանի կինը՝ Մերի Տողանյանը: Այնուհետև ելույթ ունեցավ ՌԴ-ում ՀՀ դեսպանության երրորդ քարտուղար Կարեն Շաքարյանը: Ներկաներին ողջունեցին Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Վիլեն Ազատյանը, ինչպես նաև Հայաստանի և Ռուսաստանի գրողների միությունների անդամ Գոհար Ռշտունին: Շնորհակալական խոսք ասաց դպրոցի տնօրենը՝ մանկավարժական գիտությունների թեկնածու Շողիկ Փահլևանյանը: Այնուհետև ներկաները մեծ հետաքրքրությամբ դիտեցին դպրոցի գործունեության տարեկան հաշվետու տեսաժապավենը:

Պաշտոնական մասից հետո «Վերածնունդ» դպրոցի սաները հաջողությամբ ներկայացրին ստեղծագործական հարուստ ծրագիրը: Ուրախության և բարության մթնոլորտում նրանք ոգևորությամբ ներկայացրին գրական-երաժշտական և ազգային պարային հետաքրքիր կատարումներ:

Մոսկվա-Երևան

ՊԱՐԱՅԻՆ ՏՈՆ

Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի ունեցավ Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի պարարվեստի մանկավարժություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողների ավարտական քննություն-համերգը: Նշենք, որ տարբեր տարիների ավարտական քննություն-համերգներն իրարից տարբերվում են ներկայացման ձևաչափերով: Այս անգամ այն նվիրված էր Կոմիտասի ծննդյան 150 և Արամ Խաչատրյանի 115- ամյակին:

Համերգային ծրագրի գեղարվեստական ղեկավարը ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Կարեն Գևորգյանն էր, կուրսի ղեկավարը՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Վերա Ավետիսյանը, դասախոս-փորձավարը՝ Տաթևիկ Սիմոնյանը:

Հենց նրանց մասնագիտական փորձառության, պրոֆեսիոնալիզմի և համագործակցության շնորհիվ ավարտական կուրսի ուսանողները ներկայացրին պարային գեղեցիկ կատարումներ՝ հանդիսատեսին հիացնելով իրենց մասնագիտական գիտելիքներով ու կատարողական արվեստով:

Համերգային ծրագրի առաջին մասում ներկայացվեց Կոմիտասի հայտնի ստեղծագործություններով բեմադրված «Վաղարշապատ», «Չինար ես», «Հոյ նազան», «Սարի աղջիկ», «Ալ այլուղս», «Ես սիրեցի», «Շողեր ջան», «Չեմ կրնա խաղա», «Շախկր-շուխկր», «Ամպել ա», «Շուշիկի պարերը»:

Որքան ճիշտ է նկատել Կոմիտասը, երբ գրել է. «Պարն արտահայտում է յուրաքանչյուր ազգի բնորոշ գծերը՝ մանավանդ բարքն ու քաղաքակրթության աստիճանը»:

Համերգային ծրագրի երկրորդ հատվածը Արամ Խաչատրյանի հրաշալի ստեղծագործություններին էր նվիրված. խաչատրյանական ստեղծագործություններով գունագեղ պարային շքերթում՝ Վալս, Գորգագործների պարը, Տղամարդկանց պարը, Ուզունդարա, Լեզգինկա, Նունեի և Կարենի պարը, Վարդագույն աղջիկների պարը, Գարուն-Երևան, ուսանողներն աչքի ընկան կատարողական վարպետությամբ, երաժշտական ռիթմի ընկալման և պարարվեստի նրբերանգների ներդաշնակ մատուցմամբ՝ հաճելի զգացողություններ պարգևելով հանդիսատեսին՝ դասախոսներին, ծնողներին և հյուրերին:

Պարային բեմադրություններն ուղեկցվում էին հանճարեղ Կոմիտասի և հայազգի աշխարհահռչակ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի կյանքի կարևորագույն դրվագների մասին պատմող տեսասահիկներով, որոնք պարային բեմադրություններին զուգընթաց մշակութային յուրահատուկ երանգ ու ոճ էին հաղորդում օրվա խորհրդին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Գարնանային ջերմ շնչով ու բերկրանքով էր պարուրված Շենգավիթ համայնքի Հ. Ավետիսյանի անվան N 74 հիմնական դպրոցի դահլիճը: Վաստակաշատ դասվար Ալվարդ Հարությունյանը, ով բազմաթիվ ու բազմաբովանդակ օրինակելի դասերի, ինքնատիպ միջոցառումների հեղինակ է, այդ օրը ևս 3 ա դասարանի իր սաների հետ կրկին հիացրեց հանդիսատեսին՝ ներկայացնելով ամենայն հայոց Մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանի ծննդյան 150-ամյակին նվիրված գրական-երաժշտական ցերեկույթը, որը կրում էր «Մենք ենք և մեր Թումանյանը» խորագիրը:

Միջոցառումն ուղեկցվում էր տեսանյութերով, որոնց

Ուսուցիչը մեր շրջանավարտն է «ԹՈՒՄԱՆՅԱՆՈՎ ԻՄԱՍՏՆԱՅԱԾ»

զուգընթաց հանդիսատեսը լուռ հիացմունքով դիտում էր երեխաների անկաշկանդ ելույթները՝ ասմունք, բեմադրություն, երգ ու պար, հերոսների բանավեճ և այլն: Երեխաները մտել էին Մեծն Թումանյանի բանաստեղծական, հեքիաթային, խրատներով լի աշխարհը. դահլիճում թևածում էին թումանյանական շունչն ու ոգին:

Փորձառու դասվարը ցերեկույթին մասնակից դարձրեց նաև հյուրերից, ծնողներից ոմանց, ովքեր սիրով ու հաճույքով ասմունքեցին: Միջոցառման ընթացքում փոքրիկները բացահայտեցին Թումանյանի ստեղծագործությունների պարզության ու խորության, հայրենասիրության ու բնության հանդեպ անսահման սիրո ելևէջների գաղտնիքները:

Որքա՜ն գեղեցիկ էր այն պահը, երբ բեմ բարձրացան «Վերնատան» մշտական անդամները՝ Ղ. Աղայան, Լ. Շանթ, Ն. Աղբալյան, Ավ. Իսահակյան, Դ. Դեմիրճյան, ովքեր եկել էին շնորհավորելու հոբելյարին՝ անմահ Թումանյանին:

«Այս հմուտ, հանճարեղ լոռեցուն» շնորհավորում էին նաև նրա հերոսները՝ բարի ու չար, ծույլ ու ջանասեր, անխելք ու հիմար… Մի խոսքով, փոքրիկները հերոսների կերպարանք առած, արտահայտում էին իրենց սերն ու երախտիքը սիրելի բանաստեղծի, մանկագրի նկատմամբ: Իրենց դասվարի հետ միասին նրանք հանդիսատեսին ցույց տվեցին՝ Թումանյանն ինչպես է ներծծված, ծուլված իրենց հոգուն, որ նա պարզապես չի երևում, ինչպես չի երևում այն օդը, որը մենք շնչում ենք: Երեխաները նույնիսկ բանավիճում էին թումանյանադաստիարակչական գաղափարների շուրջ՝ դրվատելով աշխատանքը, ազնվությունը, հայրենասիրության դասերը, բարությունը, խելամտությունը և այլն: Ցերեկույթը համեմված էր հեքիաթների այնքա՜ն ուսանելի ու դաստիարակչական խտացումներով, որ դահլիճում նստած թե՛ փոքր և թե՛ մեծահասակ ականատեսը նորից ու նորից համոզվում էր, որ Թումանյանի հեքիաթը երբեք չի ծերանում: Ցերեկույթի ընթացքում «խոսում էր» ոչ միայն Թումանյանը, այլև Կոմիտասը, Չարենցը, Բրյուսովը, Կապուտիկյանը և «Վերնատան» անդամները, որոնց խոսքերն ավետում էին Թումանյանի մեծության մասին:

Ցերեկույթն ավարտվեց հանրաճանաչ «Անուշի» «Ամպի տակից» և «Համբարձման տոն» երգ-պարերով: Իսկ հաղորդավարներն իրենց դասվարի հետ եզրափակեցին ցերեկույթը հետևյալ խոսքերով.

- Այո՛, Թումանյանը մերն է, մենք՝ Թումանյանինը, որովհետև Թումանյանի հետ ծնվում ենք, Թումանյանի հետ՝ մեծանում, Թումանյանի հետ՝ իմաստնանում:

Եվ ուզում ենք բարձրաձայն ասել Թումանյանի պես. «Արևի նմա՛ն նայեցեք աշխարհին»:

Մենք էլ՝ դպրոցի տարրական դասարանների մեթոդմիավորման անդամներս, միանում ենք մեր հարգարժան տնօրինությանը և մաղթում անսպառ ուժ ու եռանդ մեր հմուտ ու փորձառու դասվարին, ումից շա՜տ-շա՜տ բան ունենք ընդօրինակելու:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ
Մեթոդմիավորման նախագահ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է:
Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 31.05. 2019 թ.
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ